

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶԱԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՆԵՏՈՒՄ

Հայկական ՍՍՏ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի 1947—1950 թ. թ. գիտա-հետազոտական աշխատանքների պլանների մեջ իր կարևոր բաժինն ունի Հայրենական պատերազմի պատմության կարիները: Կարիների առջև դրված է մեկ կարևոր պրոբլեմ՝ հետազոտել Հայրենական Մեծ պատերազմում հայ ժողովրդի մասնակցությունը վերաբերող նյութերը, դրանք հավաքել կարիների արխիվում, մշակել և հրատարակել առանձին աշխատություններով «նյութեր Հայրենական Մեծ պատերազմի պատմության» սերիայով:

Այդ խնդիրները կատարելու համար ստեղծված են անհրաժեշտ պայմաններ, հատկացված են նաև միջոցներ:

Հայրենական պատերազմի պատմությանը վերաբերող նյութերի հավաքումը մեր ռեսպուբլիկայում սկսվել է զգալի ուշացումով: Հայրենական Մեծ պատերազմին հայ ժողովրդի ակտիվ մասնակցություն մասին նյութերը պատերազմի սկզբում կամ չէին հավաքվում, կամ էլ հավաքվում էին առանձին անհատների կողմից, որոնք ոչ բոլոր դեպքերում էին այդ գործին մոտենում դիտականորեն, բարեխիղճ կերպով, բացի այդ, աշխատանքն էլ սխառմատիկ չէր կատարվում, իսկ ընդգրկումը փոքր էր:

1942—43 թ.թ. Հայրենական պատերազմի մասին նյութերն սկսեց հավաքել Խևուզցիայի թանգարանը: 1944 թ. թանգարանի վերակազմվելուց հետո Հայկական ՍՍՏ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտում հիմնվեց Հայրենական Մեծ պատերազմի պատմության կարիներ, որն սկսեց զբաղվել այդ կարևոր հարցերով: Կարիների գործունեությունը 1944—1947 թ. թ. գլխավորապես ընթացել է նյութեր հավաքելու, մշակելու ուղղությամբ: Կարիները ներկայումս ունի 13 ֆոնդ. 1) հայկական միավորումների և առանձին զորամասերի ֆոնդում կուտակվում են այն նյութերը, որոնք վերաբերում են հայկական առանձին միավորումների և զորամասերի պատմությանը: 2) գեներալների ֆոնդի գործերում պահվում են հայ գեներալների կյանքին և մարտական գործունեությանը վերաբերող նյութերը, նրանց մղած մարտերի նկարագրությունը, սխեմաներ և այլն: 3) Սովետական Միության Հերոսների ֆոնդում գտնվում են հայ ժողովրդի այն զավակների մարտական գործերը, որոնք արժանացել են Սովետական Միության Հերոսի կոչման. այստեղ նյութեր կան 86 հայ հերոսների մասին, իսկ 20 հերոսներին վերաբերող տեղեկությունները դեռ լրիվ ձեռք չեն բերվել: 4) հատուկ ֆոնդում կենտրոնացվում են գնդապետների և փոխգնդապետների հրամանատարական-ղեկավար կազմի գործունեությանը նվիրված փաստաթղթերը, նամակները, հրամանները և ուրիշ նյութեր, ինչպես և առանձին ընկերների ղեկավարած ստորաբաժանումների մարտական գործողությունները: 5) հայկական սպայական մյուս կադրերի (մայորներ, կապիտաններ և լեյտենանտներ) կյանքին ու պայքար-

քին նվիրված նյութերը պահվում են առանձին ֆոնդում, որը հսկայական ծավալ ունի և հարուստ է իր բազմազանությամբ. 6) կաբինետի շատ հետաքրքիր և ֆոնդերից մեկն էլ հայ պարտիզաններին վերաբերող ֆոնդն է. այստեղ հավաքվում են գերմանա-ֆաշիստական զավթիչների թիկունքում գործած հայ պարտիզանների մարտական կյանքը պատկերող փաստաթղթերը, ռուշերը, նամակները, սխեմաները. 7) հերոս քաղաքներ Լեւինդրադի, Մոսկվայի, Ստալինգրադի, Սեաստոպոլի և Օդեսայի պաշտպանների շարքերում մարտնչում էին բազմահազար հայ ռազմիկներ. այդ քաղաքների պաշտպանությանը մասնակցած հայերի մասին նյութերն առանձնացվել են մի ֆոնդում, որը հնարավորություն կտա հետազոտողին ուսումնասիրելու Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հայ ժողովրդի կատարած դերը հերոս քաղաքների պաշտպանության գործում. 8) Հայաստանի բազմաթիվ զավակներ կոչվում էին ծովերում, Սովետական ռազմական նավատորմում. «Հայ ծովայինները» ֆոնդը պարունակում է որոշ նյութեր Սովետական Միության ջրային սահմանները և տերիտորիաները պաշտպանող հայերի մարտական գործերի մասին. 9) կաբինետը հատուկ ֆոնդում հավաքում է հայ կնոջ կատարած աշխատանքի և մղած կռիվների մասին նյութեր. որոնք հետազոտողին պատմում են ճակատում բազմաթիվ հայուհիների անձնվիրությունն ու հայրենասիրությունը. 10) թիկունքին վերաբերող ֆոնդն ընդգրկում է ռեսպուբլիկայի բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի հերոսական աշխատանքի և Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների կազմակերպող ու ղեկավարող դերի հարցերը լուսաբանող փաստաթղթերը, գրագրությունները, նամակները, որոշումները. 11) կաբինետում առանձին ֆոնդ է ստեղծվել. որի գործերում պահվում են արասասանժանյան հայերի կողմից ֆաշիզմի և ռեակցիայի դեմ մղված պայքարը պատկերող փաստաթղթերը, նյութերը: Առանձնապես հետաքրքրական են Հունաստանում ռեակցիոն ռեժիմի դեմ մարտնչող հայերի մասին ձևաք բերված փաստաթղթերը և այլ վկայությունները. 12) կաբինետում կուտակվել են ռազմաճակատից թիկունք և թիկունքից ռազմաճակատ ուղարկված հազարավոր նամակներ, որոնց մեջ դրսևորվում է սովետական մարդկանց բարոյական ուժը, հայրենասիրական վեհ զգացմունքները. հաղթանակի նկատմամբ նրանց անհաղթահարելի հավատը. 13) կաբինետում հատուկ գործում կենտրոնացված են լուսանկարները, որոնք Հայրենական պատերազմի անդնահատելի փաստաթղթերն են: Բացի լուսանկարներից, կան նաև բազմաթիվ իրեր, հայ սպաների և զինվորների անվանական նվերներ, ալբոմներ, պատվոգրեր, ինսպես և պերմանական ջախջախված շաբոններից հայ ռազմիկների խլած զանազան իրեր:

Կաբինետում ձեռք են բերվել տասնյակ զինվորական հայկական և սուսական թերթեր: Կաբինետի աշխատակիցներ ընկ. ընկ. Ք. Գրիգորյանը և Լ. Մարտիրոսյանը մշակում են ֆոնդերի նյութերը գիտական հետազոտության համար: Նրանք նաև դրի են առնում պատերազմի մասնակիցների պատմածները: Որոշ աշխատանք է կատարվել նաև նյութերի բիրտագրաֆիան կազմելու ուղղությամբ, որի վրա աշխատում է կաբինետի կրտսեր զիտ. աշխատակից ընկ. Ս. Ստամբուլյանը:

Իհարկե վերևում հիշատակված ֆոնդերում պարունակվող բազմաքանակ փաստաթղթերը ունեն բացառիկ կարևորություն. սակայն այդ նյութ-

թերը լրիվ չեն և չեն ընդգրկում յուրաքանչյուր բնագավառի բոլոր կարեւոր պատմական իրադարձութունները:

Մինչև այժմ առավել սկզբները կարճնկարի գործունեությունը գլխավոր կողմը եղել է նյութերի հավաքումը, ու պահպանումը: Հայրենական Մեծ պատերազմում հայ ժողովրդի մասնակցության մասին լուրջ աշխատություններ չեն հրատարակվել: Հրատարակված մի քանի բրոշյուրներում և հոդվածներում թույլ են արվել կոպիտ սխալներ և պատմական փաստերի ազավազումներ:

Պարենետը այս տարվանից, շարունակելով նյութերի հավաքման աշխատանքները, հատուկ ուշադրություն է դարձնում հրատարակման գործին: Հայրենական Մեծ պատերազմում Հայ ժողովրդի հանդես բերած հայրենասիրության և հերոսականության փաստերը գիտականորեն շարադրելը և հրատարակելը դառնում է կարճնկարի գլխավոր խնդիրը:

Կարենետը սկսել է շարունակել հայրենական պատերազմի պատմության սերիայով գրքերի հրատարակումը: Այդ սերիայի նպատակն է թեմատիկ հարցերի մասին հրատարակել առանձին գրքեր: Արդեն լույս են տեսել «Հայ ռազմիկների հերոսություն տարեգրությունները 1941—1945 թ. թ.» և «Հայ թամանցիները» աշխատությունները: «Հայ թամանցիները» գրքի հեղինակ ընկ. Սիմոն Նալբանդյանը պատմում է հայկական 89-րդ թամանյան եռակի շքանշանակիր հայկական դիվիզիայի մզած մարտերի մասին կովկասյան նախաշրջաններից սկսած մինչև Իստիկ: Արդեն պատրաստված է ազդարարության և հանձնվել է հրատարակչությանը սերիայի երրորդ գիրքը՝ «Վեց օր» այդ գրքում հեղինակ ընկ. Մ. Անդրեասյանը էպիկական շնչով, գեղեցիկ նկարագրում է Ռոստոմ քաղաքի փոզոցներում հայ ժողովրդի անվանի զավակ Դուկաս Մադոյանի մզած վեցօրյա հերոսամարտերը: Առաջիկայում նախապատրաստվելու են հրատարակչության նոր աշխատություններ: Հրատարակման գործն աստիճանաբար պետք է ընդարձակվի և ավելի լայն ծավալ ընդունի:

Կարճնկարի գիտա-հետազոտական աշխատանքի մյուս կարևոր կողմը թեմատիկայի հարցն է: 1947—1951 թ. թ. գիտա-հետազոտական աշխատանքի համար կազմվել է հեռանկարային պլան: Այդ պլանը նախատեսում է հետազոտել, մշակել և հրատարակման համար նախապատրաստել այն գլխավոր հարցերը, որոնցով կարելի է շատ թե քիչ լրիվ գույց տալ հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական Մեծ պատերազմին: Այստեղ առաջին պլանի վրա են դրված հայկական միավորումներին վերաբերող աշխատությունները: Նախատեսվում է երեք մոնոգրաֆիկ աշխատություն 89-րդ թամանյան դիվիզիայի մասին — ա) 89-րդ հայկական դիվիզիան Հյուսիսային կովկասում ու թամանում մզված մարտերում: բ) 89-րդ թամանյան դիվիզիան Դրիմի ազատագրման համար մզված մարտերում և գ) 89-րդ թամանյան դիվիզիան Օդերի պլացդարում և Բեռլինի փոզոցներում մզված մարտերում: Հատուկ աշխատություններ են նախապատրաստվում կերպարային դիվիզիայի պատմության մասին, կերպարային գնդապետ Ջալալյանի հրամանատարությունը գործող հայկական միավորման, Սև ծովի կովկասյան ափերին, Տուապսի շրջանում 1942 թ. աշնանը պաշտպանողական ծանր կռիվներին մասնակցած հայկական զորամասերի, Ստալին-

գրադյան գվարդիական միավորման վերաբերյալ, ինչպես և այն մրավորումների վերաբերյալ, որոնց կազմում հայերը մեծ առկոս էին կազմում Այսպիսով կաթինեաի գիտա-հետազոտական աշխատանքն այդ ուղղությամբ կընդգրկի ՍՍՌՄ-ի զինված ուժերի կազմում եղած հայկական սզգային միավորումների պատմութունը և ցույց կտա նրանց գործունեութունը պատերազմի տարիներին:

Նախատեսվող մոնոգրաֆիաներից մի քանիսը լուսաբանելու են Հայրենական Մեծ պատերազմի ամենանշանավոր, հանգուցային ճակատամարտերում հայ ժողովրդի մասնակցութունը. այսպես, օրինակ՝ այժմ կատարվում են ուսումնասիրութուններ և նախապատրաստվում են աշխատութուններ հետևյալ թեմաներով. «Կովկասի հերոսական պաշտպանութունը 1942—1943 թ. թ.», որը պետք է լուսաբանի Կովկասի պաշտպանութան ժամանակաշրջանի քաղաքացիական պատմութունը ողորդական իրադրության ընդհանուր ֆոնի վրա, ցույց տալով ոուս մեծ ժողովրդի և Անդրկովկասի ժողովուրդների բարեկամութունն ու միաձուլութունը թշնամու դեմ մղված կռիվում, «Հայ ժողովրդի ակտիվ մասնակցութունը Մոսկվայի պաշտպանութունը 1941 թ.» աշխատութունը պետք է լուսաբանի Մոսկվայի պաշտպաններ հայ գեներալների, սպաների, զինվորների մղած կռիվը, Մոսկվայի աշխարհազորի կազմում հայերի հանդես բերած հայրենասիրութունը, ինչպես և ցույց տա, թե ինչ էր կատարվում Հայաստանում Մոսկվայի պաշտպանութան օրերին, ինչպես էր հայ ժողովուրդը խոսքով ու գործով միասնաբար կանգնել Մոսկվան պաշտպանելու: Նույն բնույթի աշխատութուններ են նախապատրաստվում «Հայ ժողովուրդը Լենինգրադի պաշտպան», «Հայ ժողովուրդը Սաալինգրադի մեծ ճակատամարտի ակտիվ մասնակցի», «Հայ ժողովուրդը Սևաստոպոլի պաշտպանութան և ազատագրման համար մղված կռիվներում» և այլն:

Առանձին ուսումնասիրութուններ են կատարվում, որպեսզի վեր հանվի հայ ժողովրդի մասնակցութունը և կատարած դերը և զբաղրած ժողովուրդներին գերմանա-ֆաշիստական զավթիչների և նրանց դաշնակիցների օկուպացիոն լծից ազատագրելու գործում: Օրինակ՝ «Հայ ժողովուրդը Ղրիմի ազատագրման համար մղված մարտերում», «Հայ ժողովուրդը Ուկրաինայի ազատագրման համար մղված կռիվներում», Հայաստանի զավակները մերձբլթյան ժողովուրդների ազատագրման համար մղված մարտերում», «Հայաստանի զավակները կատարեցին իրենց ազատագրման միսիան» Լեհաստանում, Չեխոսլավակիայում, Հարավ-Սլավիայում, Բուլղարիայում և այլուր: Այդ աշխատութունները ցույց կտան, թե ինչպես հայ ժողովուրդը, որ հաղաբար տարիներ զրկված է եղել անկախութունից ու պետականութունից, ուրիշներից օգնութուն է աղերսել իր ճնշողներից ազատագրվելու համար, սովետական կարգերում ոչ միայն ստացել է անկախութուն և պետականութուն, այլև ոուս և մյուս և զբաղրական ժողովուրդների հետ միասին ռեակցիայի սև ուժերի դեմ մղվող անհղ պատերազմում հանդես եկավ ազատագրական միսիայով, օգնեց ճնշված ժողովուրդներին՝ ազատագրվելու ֆաշիզմի շղթաներից: Դա հայ ժողովրդի պատմական մեծ ծառայութունն է աշխարհի քաղաքակրթութունը, դեմոկրատիային, առաջադիմութունը: Այդ մասին կվկայեն հայ հերոսների անմահ անունները, որոնք փորագրված են Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբլթիկայի, Ղրիմի դաշտերում գտնվող

գերեզմանաքարերի վրա. այդ մասին սերունդներին կպատմեն ընկա ճ հայ քաջերի անունները, որոնք քանդակված են Շիպկայի լեռնանցքներում, Հարավսլավիայի լեռներում, Դանուբի ավերին, Բելգրադի կենտրոնական հրապարակում, Վարչավայի, Պրագայի, Սոֆիայի հրապարակներում, Բրանդենբուրգյան դարպասների մոտ և Օդերի Ֆրանկֆուրտում՝ եղբայրական գերեզմանների քարերի վրա:

Կարինետը աշխատանք է ծավալում հեռագոտիլու և աշխատութուններ նախապատրաստելու իշնամու թիկունքում գործող հայ պարտիզանների մասին: Սովետական Միության կրկնակի Հերոս Գովպակի պարտիզանական միավորումներում կոմոդ հայ պարտիզանների մասին հետաքրքրական աշխատանք է գրել հայկական ջոկատի ղեկավար ընկ. Ս. Հարությունյանը, որի աշխատութունը գտնվում է մշակման պրոցեսում: Վերջերս մեզ հայտնի դարձավ Ղրիմում, Թեոդոսիայում գերմանական օկուպացիայի ժամանակ գործած հայկական ևս մեկ ընդհատակյա կազմակերպության գործունեութունը, որի մասին հետաքրքրական նյութեր է հավաքել ընկեր Մելքումովը: Ընկեր Միկոյանի անվան պարտիզանական ջոկատի մասին աշխատութուն է գրում կարինետի գիտական աշխատակից ընկ. Ս. Խաչյանը:

Կարինետը նախապատրաստում է հրաաարակելու համար մի շարք աշխատութուններ, որոնք նվիրված են առանձին հայ գեներալների, առավել աչքի ընկած սպանների, Սովետական Միության Հերոսների: Գրող Մարիետա Շահինյանը աշխատում է «Բանակի գեներալ Ի. Բաղրամյան» մեծածավալ աշխատութուն վրա, ընկ. Հր. Քոչարը գրում է «Աղմիրալ Իսակովի կյանքը և գործունեութունը», ընկ. Մ. Անդրեսսովը նախապատրաստում է հատուկ աշխատութուն հայ նշանավոր քաղաքական աշխատող գեներալ-լեյտենանտ ընկեր Գալաշովի մարտական կյանքի մասին, ընկեր Վարդան Վարդանյանը գրում է հրետանու գեներալ-մայոր Ս. Կարապետյանի գործունեութունը պատկերող աշխատութուն և այլն: Կարինետի առջև խնդիր է ծառայել նախապատրաստել աշխատութունների մի ամբողջ շարք մի քանի տասնյակ հայ գեներալների մասին, հարյուրից ավելի Սովետական Միության հայ հերոսների մասին, ինչպես և առանձին ավագ և միջին սպանների կամ զինվորների մասին, որոնց մարտական գործողութունները հարուստ են և արժանի առանձին ուսումնասիրութուն:

Կարինետը նյութեր է հավաքում և առանձին ուսումնասիրութուններ է կատարում «Հայերը ՍՍՌՄ ռազմա-ծովային նավատորմում», «Հայ բժշկա-սանիտարական աշխատողները Հայրենական Մեծ պատերազմում», «Հայ կինը Հայրենական Մեծ պատերազմում», «Հայ սպայական կադրերը», «Հայ ռազմիկները ճապոնական իմպերիալիզմի դեմ մղված մարտերում» թեմաների շուրջը:

Հատուկ նշանակութուն ունեն զինվորների հուշերը: Կարինետը կազմակերպել է հուշերի ձևով պատմական գրականութուն ստեղծելու գործը: Այդ աշխատանքի մեջ ներգրավվում են Հայրենական Մեծ պատերազմին մասնակից գեներալներ, սպաներ, շարքայիններ: Ընկեր Սուրեն Թովմասյանը կարինետին ներկայացրել է իր «Հուշեր»-ի մի մասը՝ «Գովկասի պաշտպանութունի զիրքերում» վերնագրով, որը 5—6 մամուլի ծավալով մի հետաքրքրական աշխատութուն է այն հերոսական կռիվների մասին, որ մղել են մեր մարտիկները Գովկասյան լեռնաշղթայում, հատկապես Սանչարո լեռնանցքի Տեղեկագիր 7—7

բաժանում: Այդ աշխատութիւնն այժմ խմբագրվում և նախապատրաստվում է տպագրութեան համար: Ընկ. Աշոտ Բարսեղյանի «Հուշեր» նվիրված են Ստալինգրադի ճակատամարտերում հայ սպաների և ժարտիկների նախախտ բարեկամութեանը՝ եղբայրական ժողովուրդների գավակների հետ ենրանց համատեղ պայքարին թշնամու դեմ: Ընկեր Վարդան Վարդանյանի «Մարտական հուշեր» մեծածավալ աշխատութիւնը հանձնվել է գրական մշակման և նախապատրաստվում է հրատարակութեան: Այգ «Հուշերի» մեջ նկարագրված են հայ ռազմիկների ժարտական գործերը, պատերազմի առաջին օրերից սկսած, Իրյանսկի ճակատում, Մոսկվայի մատույցներում, Մերձքալթիկայում: Բրենց հուշերի վրա աշխատում են նաև ընկեր Սամվել Մովսիսյանը, Անդրանիկ Իսահակյանը և ուրիշները: Այդ գործում պատերազմի մասնակիցները դեռևս անբավարար են ներգրավված: Անհրաժեշտ է որքան հնարավոր է շատ սպաների, ժարտիկների, գնդերայինների օգնել գրելու իրենց հուշերը, որոնք կարևոր ազդու են պատերազմի պատմութեան համար:

Կարիներտի գիտահետազոտական աշխատանքի ամենակարեւոր խնդիրներից մեկը թիկունքին վերաբերող թեման է: Հայաստանի աշխատավորները ՀԿ(Բ)Պարտիայի գեկավարութեամբ հերոսական աշխատանքով կատարում էին Պաշտպանութեան պետական կոմիտեի առաջադրանքները և ամեն ինչ տալիս հաղթանակի համար: Գործարաններում, կոլխոզներում, գիտական-կուլտուրական հիմնարկութիւններում հայ ժողովուրդն անդու աշխատում էր հանուն մեր հաղթանակի:

Հայաստանի աշխատավորները ուղում են տեսնել գրքեր, որոնց մեջ շարադրված լինի պատերազմի տարիների գիշեր ու ցերեկ կատարվող անձնագոհ աշխատանքի պատմութիւնը: Այդ ուղղութեամբ Կարիներտը կատարում է առաջին քայլերը: Հավաքվում են փաստաթղթեր, նյութեր, թերթեր, որոնց մեջ տեղեկութիւններ կան թիկունքի աշխատանքի մասին: Նախատեսվում է հատուկ ուսումնասիրութիւններ կատարել հետեւյալ թեմաների շուրջը. «Հայաստանի բոլշևիկյան կազմակերպութիւնները Հայրենական պատերազմի տարիներին», «Հայաստանի բանվոր դասակարգի հերոսական աշխատանքը Հայրենական պատերազմի տարիներին», «Հայաստանի կոլխոզային գյուղը Հայրենական պատերազմի տարիներին», «Հայաստանի գիտութիւնը, արվեստը, գրականութիւնը Հայրենական պատերազմի տարիներին», հատուկ ուսումնասիրութեան նյութ են դառնում «Հայաստանի մայրաքաղաք Երևանը Հայրենական պատերազմի տարիներին» և «Լենինական քաղաքը Հայրենական պատերազմի տարիներին» թեմաները: Ինչպես և պլանավորվում են առանձին աշխատութիւններ՝ նվիրված առավել մեծ գործարաններին և կոլխոզներին: Օրինակ, ընկ. Կ. Վերմիշերը գրում է մի աշխատութիւն «Ստեփանավանի շրջանի «Կարմիր պարտիզան» կոլխոզը Հայրենական պատերազմի տարիներին» թեմայով, որի մեջ ցույց է տալիս կոլխոզի բազմակողմանի կյանքը, կենցաղը և աշխատանքը, ռազմաճակատի՝ իր գավակների հետ ունեցած կապը և այլն:

Պետք է ընդունել, որ թիկունքին վերաբերող թեման հետազոտելու գծով ծավալված աշխատանքը դեռևս չի ընդգրկում ամենակարևոր հարցերը: Այստեղ պետք է աշխատանքի մեջ ներգրավել թիկունքի աշխատողներին, դյուղական ինտելիգենցիայի ներկայացուցիչներին և լայն մասշտաբով

ծավալել գիտա-հետազոտական գործունեություն: Յուրաքանչյուր շրջան և գյուղ պետք է ունենա պատերազմի տարիների իր պատմությունը, ուղե-ժամակատ ուղարկված իր զավակների գործերը և թիկունքի հերոսների աշխատանքները պատկերող նյութերը: Հատուկ սիրով և խնամքով պետք է ուսումնասիրել և վեր հանել մեր հայրենիքի ազատության համար զոհվածներին, որոնց հիշատակը երբեք չի կարելի մոռանալ: Ամեն մի շրջան և գյուղ, ամեն մի գործարան և քաղաք ունի իր նշանավոր դավակը, իր հերոսը, որոնց օրինակով պետք է դաստիարակել նոր սերնդին:

Կարճատև ձգտում է իր գիտա-հետազոտական աշխատանքների մեջ ներգրավել Իտությունների Ակադեմիայի հիմնարկներում և նրանցից դուրս եղած գիտական կադրերին, Հայրենական պատերազմի մասնակիցներին, ինչպես և մեր ուսպուրիկայից դուրս գտնվող այն ընկերներին, որոնք կարող են օգտակար գործ կատարել հայ ժողովրդի դերը պատերազմում ցույց տալու համար: Բայց այդ ուղղությամբ մեր աշխատանքը գեղես շատ բացի ունի: Նախատեսված թեմաներից շատերը դեռ սպասում են իրենց ուսումնասիրողին և մշակողին: Հայրենական Մեծ պատերազմում հայ ժողովրդի մասնակցության հարցերը բազմաթիվ են. մի շարք միավորումների պատմությունը, մի քանի ճակատամարտերում հայերի մասնակցությունը, մի քանի տասնյակ հայ գեներալների կյանքը և գործունեությունը, Սովետական Միության 106 հայ շերտաների կյանքը, շքանշաններով պարգևատրված ավելի քան 50 հազար հայ ռազմիկների սխրագործությունները, իրենց կյանքը հայրենիքին նվիրած, զոհված զինվորների հիշատակը, թիկունքի աշխատավորների մեծ սխրագործությունները պահանջում են լուրջ, քրտնաջան գիտական աշխատանք, աղբյուրների հետազոտություն, փաստերի և նյութերի հետազոտում, ճշտում. իսկ այս ամենը՝ զգալի թվով կադրեր և նրանց կողմից մեծ ջանքերի ներդրում:

Մեր անհետաձգելի խնդիրն է՝ համախմբել բոլոր նրանց, ովքեր այս կամ այն ձևով լուսարանում են Հայրենական Մեծ պատերազմի պատմության առանձին հարցերը, հայ ժողովրդի մասնակցությունը պատերազմում, ուղե-դուրս տալ նրանց աշխատանքներին, միաժամանակ հարստացնել կարճատև հավաքված նյութերը և սխտեմատիկ գիտական մշակման ենթարկելով ստեղծել Հայրենական Մեծ պատերազմին և նրա մեջ հայերի մասնակցության հերոսական էպոպեային արժանի աշխատություններ:

